

սեան թուականին մէջ, ինչպէս այդ կը տեսնուի նոյն նոյն իսկ խորենացոյ պատմութենէ, յորում կը յիշուի Մար—իհնար ի:իսան մի, զիսպան ֆրիստոսի ժամանակակից Աբգար թագաւորի :

Գ. Հայկ նահապետին և այլ հայ իշխանաց և թագաւորաց նկատմամբ զրած պատմութիւնները, կարող էր առնուլ խորենացին ժողովրդական աւանդութենէ, որ և սա չհերքէր Մար—Աբասեան Պատմութեան զոլութիւնը :

Խ. Հուսկ, խորենացին չէր կրնար զմեռոտը Մար—Աբասայ հետ շփոթել :

Այս երգակցութիւնը հազիւ թէ կարող էին տարակուսի տակ ձգել նախորդ քննա-

զատին յառաջ բերած փաստերը : Իսկ զայլով Մար—իհնար անուան, զոր մէջ կը բերէ իբրև սպացոյց զոլութեան « Մար » տիրոջսին, արդէն նորագոյն հետազոտութիւնք սպացուցած են, որ բուն իսկ աղբիւրն, յորմէ կը հանէր Մովսէս իւր տեղեկութիւնքը՝ Աբգար թագաւորին և նորա ֆրիստոսի հետ ունեցած յարաբերութեանց մասին, այն իսկ Գ — ԳրԷ զարու մէջ յօրինուած անհարազատ շարադրութիւն մ'էր. նա էր՝ Լարուքնայի ընծայուած « Աբգարու առասպելն » : Առ այս հմտացիր ի *Lepsius*, « Die Edessensische Abgarsage » և այլ հետազոտութիւնք նոյն նիւթին վրայ հրատարակուած : Երարունակելի



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ Վ Ա Կ Ա Ն Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

(Տես յ'էջ 500)



ԱՐԱՆ երեսունհինգ տարի անցնելէն ետքը՝ Սարգիս Ծատուր Աղաւաղեան նոր սպարան մը հաստատելով ի Մարաս « ցանկայր, կ'ըսէ յիշատակարան մը զրոց, իսկ ամենայն յօժարութեամբ սրտի, հանդերձ ծախիւք իւրովք, զի յիւրում սպարանի տպագրեցին ամենայն նորասիպ մատենաք առ ի հոգևոր վայելումն ամենայն հայկազեանս առնմի » : Եոյն ատեն զեռ կենդանի էր յիշեալ Յարութիւն Շմաւոնեան, քահանայ Մատրասի եկեղեցւոյն. որ ունէր քովը ճաշակեցեք կամ Սրբազնագործուրիան կոչեցեալ զբընյի մը, « ժողովեալ ի զրոց աստուածայնոց և ի լուսաւոր բանից սուրբ վարդապետաց, աշխատութեամբ Նոր Զուղայու Ս. Ամենափրկչի զերհնչակ վանից միարան՝ Յովնաննէս մեծ-

իմաստ հոնտորի և բանիբուն աստուածաբան վարդապետի » : Տեսնելով Աղաւաղեանի առաջարկութիւնը, Շմաւոնեան ներկայացաւ իրեն այս զբընյի. « տեսեալ, կ'ըսէ, զամենարարի փափաք սոյն ազնուատոհմ պարոնիս, փութացայ յառաջ մատուցանել զսոյն մատենան առ ի լոյս ընծայել տպագրութեամբ : Եւ սոյն ազնուազարմ պարոնս ամենայն յօժարակամ կամօք ընկալեալ՝ փութովին ետ տպագրել զայս քաղցրանշակ մատենան » :

1810էն եղած է հոն Շնորհալի Հայրապետան Ելիսիոյ ողբոց առաջին տպագրութիւնն, « արդեամբ և ծախիւք, — ինչպէս կը նշանակուի ի անկատուն, պարոն Սարգիս Ծատուր Աղաւաղեանց կոչեցելոյն, և ի նորին տպարանի որ ի Մատրաս » : Յառաջաբանին

մէջ կը ծանուցանէ սպաղորդն , « ... զոր-  
 ծարանս այս՝ որ եղև նախկին լուսածոց սորա ,  
 ոչ միայն զաւետիս ուրախութեան ազգիս մե-  
 ռոյ մատուցանէ զսպաղորութենէ սորա , այլ  
 և յայտ առնէ միանգամայն զփոյժն իւր և  
 զհոգ՝ զոր կալաւ ըստ կարի իւրում առ ուղ-  
 ղապրութիւն սորուն , բարդատութեամբ եր-  
 կուց ձեռագիր օրինակաց ևեթ , զորս միայն  
 կարաց գտանել . մինն՝ որ առաւել ընտիր  
 երևեցաւ (թէ և ուրեք ուրեք խոսորեալ) զտաք  
 ի մէջ բազմութիւն ձեռագիր հին մատենից  
 պարուն Յայրութիւն իսահակեան , ի ձեռն  
 հարագաւոր որդւոյ նորս պարուն Արքանամ  
 զուրթամիս պատանուոյն , որ ամենայօժար  
 կամօք առձեռն պատրաստ ետ գործատանս  
 մերոյ՝ զայս գրքոյի ի սպաղորմն » :

Պա ինչն պարուն Արքանամ Աղանուր ,  
 փեսայացեալ սպա մեծանուն բարերարի ազ-  
 գիս , Սամուելի Մուրատայ , բարերար և ա-  
 ռատամիտ սատար երևցաւ ի թարգմանութիւն  
 և ի սպաղորութիւն զանազան օգտակար եր-  
 կասիրութեանց :

Երանօթ է նաև Պուռնագեան Պետրոս  
 վարդապետին սպաղորութիւնն , որ կարենցի  
 էր հայրենեօք և Հոռովայ Հաւատասփիւս  
 Ժողովոյն պարոցին աշակերտ : Սա 1808ին՝  
 ի ինրոյ նոյն Աղանուր պատանուոյն՝ թարգ-  
 մանեց Մարմոնթել զազգիացոյն Բելիասար  
 վիպասանականը , և սպաղորեցաւ ի Մատրաս :  
 Ատեն անցնելէն ետքը՝ համանուն գիրք մը ,  
 երկասիրութեամբ Ժանյիս օրիորդի զաղ-  
 ղիւհուոյ , թարգմանութեամբ ի հայ՝ Գեր .  
 Եղուարդայ Հիւրմիւզ , ի ինրոյ և ծախիւք  
 նոյն պարուն Աղանուրի՝ սպաղորեցաւ ի Ս . Ղա-  
 զար Վենետիոյ , ուր արդէն նոյն պարունին  
 խնդրանօք և նոյն թարգմանչին ձեռքով հրա-  
 տարակուեր էր Յլորիանու Նուսա Պոսպի-  
 շիոս և ուրիշ գրքեր :

\* \* \*

Երկասիրութեանս սպաղորած աստն ,  
 պատմական հետաքննական գրութեք մը երև-  
 ցաւ յանգղիական բարբառ , շարադրեալ յազ-  
 զային անձէ մը և սպաղորեալ ի կալկաթա :  
 Խորագիրն է = History of Armenians

in India, = բազկացած 190 էջերէ , հե-  
 դիսակն է Մեսրոպ Յ . Սեթ : Մ'եր հեռա-  
 ւոր գաղթականաց սկզբնատրելուն և յա-  
 ռաջադիմելուն վրայ օգտակար տեղեկութիւն-  
 ներ հրատարակելէն զատ , որ մեծապէս  
 ուշադրաւ են , առանձին պիտով կը խօսի  
 հնդկաբնակ ազգայնոց նախկին ուսումնասի-  
 րութեանց վրայ . կը յիշատակէ անոնց հաս-  
 տատած սպարաններն ի Բամբէյ , ի Մատրաս  
 և ի կալկաթա , և աննցմէ հրատարակուած  
 լրագրերն և ուրիշ գրքերն ինչուան մեր օրերն :  
 Բայց զաղթական և փոքրաթիւ ժողովրդոց  
 նակատագիրն անոնց վրայ ալ կատարուած կը  
 տեսնենք . և անոնք որ իրենց ազդեցիկ գիրքն  
 ունէին նաև մեզմէ հարիւր տարի յառաջ , ու  
 իրաւամբ ազգին փառք սեպուած էին , կամաց  
 կամաց անզղիական մեծ ազգին հետ ձու-  
 լուելով անհետանալու վրայ են : Ասոր կը  
 ձայնակցին Արարատ Էլմիածնի լրագրին  
 1896 տարւոյ քանի մը յօդուածներն՝ որ  
 Զուգայեցի թորոս քահանայէն գրուած են ,  
 բանիբուն և հմուտ անձէ :

Վերջին դարու կիսէն ասփին ալ այլևայլ  
 արդիւնագործ անձինք երևցան զանազան տե-  
 սակիտով հնդկահայ գաղթականութեան մէջ ,  
 որոց իրաւացի և արժանատր զօրեալը ամե-  
 նուն բերանն է : Մենք բաւական կը հա-  
 մարիք յիշատակել զԱլպայեան Յովհաննէս ,  
 զԹադիապետան Մեսրոպ և զՎիլիենեանն :

Ասոնցմէ առաջինն մեծ անուն հանած է  
 Հնդկահայոց մէջ իբրև դատարակ և թարգ-  
 մանիչ . ինքը Մասիդասիբական կոչուած ճե-  
 մարանը հիմնողներն է ի կալկաթա , ուր  
 ուր 1811էն սպարան մ'ալ բացեր էր Աւետ  
 Զնթուլում , և կը հրատարակուէին բաց ի  
 ուրիշ գրքերէ նաև Ալպայեանի հեղինակու-  
 թիւններն կամ թարգմանութիւններն : Մա-  
 տենագիտութիւն գրոց մէջ իւր անուն տակ  
 նշանակուած են ասոնք , ինչպէս , նաև 1858ին  
 մեր սպարանին մէջ գրոշմուած մի ճառք՝ զոր  
 խօսեր է , հանդերձ իւր կենդանագրով :

Երկրորդն է Մեսրոպ Թադիապետանց ,  
 գրեթէ ժամանակակից առաջնոյն , բայց տար-  
 ւօք կրտսերացյն կամ իրմէ ետքը վախճա-  
 նած : Մրկեան Յովհաննէս աւագ քահանայն ,  
 որ Պարսիզակցի է , և Պոլսոյ մէջ այլևայլ կա-

րևոր պաշտօններ կատարած թէ՛ եկեղեցեաց  
 և թէ՛ պատրիարքարանի մէջ, գնացած է և  
 ի Հնդկաստան, մասնաւոր գրուածքով մի ի  
 Տփղիս, թաղիադեանի կենսադրութիւն տը-  
 պագրած է. թէ՛ նոյն գրուածքին և թէ՛ Մատեն-  
 ևսպետարիան նոր տպագրին մէջ նշանա-  
 կուած են թաղիադեանցի բազմութիւն գրուած-  
 ներն. որոց մէջ ամենէն հետաքրքրական կրնայ  
 սեպուիլ Ազգասէր լրագիրն որ կալկաթա կը  
 հրատարակուէր Արարատեան կոչուած տպա-  
 րանին մէջ :

Վիլնենանն՝ Արծիւ տպարանն հաստա-  
 տեց ի կալկաթա, 1862, ուր այլ և այլ հրա-  
 տարակութիւններ ըրաւ, մասնաւոր եկեղե-  
 ցական զրոց. իտղարեից անտարանաց վերջը՝  
 այսպիսի յիշատակարան մը կը տեսնենք. « Ս՛վ  
 սրբազնագործ քահանայ, յիշեա՛ զբարերար  
 Տպարանի զբարեպաշտ աղայ Յովհաննէս  
 Էլիագեարի երջանիկ կեանք, և մաղթեա  
 զհոգի համայն ննջեցեալսն » : Ազգասէր լրա-  
 գիրն կը յաւելու. « Թողեա՛ զգրուորակն  
 մասին պահակութիւնս, վերագոյն համարիմք  
 զգործն քան զոր տեսաք մինչև ցարդ ի լեզու  
 ազգիս : Միշտ փիւնիկ տպագրութեանց հա-  
 մարեալ, և զարմանամք ընդ արարս եւրո-  
 պացի եղբարց մերոց : Բայց պարոն Վիլնե-  
 նեանն կոստանդնուպոլսեցի՛ շուք ածէ զա-  
 մենեքումք յայսպիսի մասին, եթէ հիմնաւոր  
 և բաւական քաջալերութիւն ունիցի » :

Կալկաթայի տպագրութեանց մէջ Չլիթու-  
 լումէն յառաջ, եպիսկոպոսական տպարանին  
 մէջ եղած է Զուղայեցի Յովհաննէս վարդա-  
 պետի Հայ-արար և Միւլէյման Շարի (1865)  
 ընծայուած կրօնական երկասիրութիւնը :

Բաց ի Ազդարար և Ազգասէր լրագրաց,  
 տպուած են ի Հնդկիս նաև Օձանասփիտո,  
 Հայելի և Հայրենասէր լրագիրք : 1846ին  
 ի Մատրաս նորէն կը սկսի Ազդարարը,  
 բայց քիչ ատեն կը տեսէ : Հրատարակողն  
 են՝ Ս. Պ. Յովհաննէս և Փ. Պ. Մելիտոս :

ՀԱՅ ՏՊԱՐԱՆԻ Ի ՌՈՒՄԻԱ ՆԻ Ի ԿՈՎԿԱՍ

Ռուսաստանի մէջ առաջին տպարան հայ լե-  
 ղուի հաստատուած է ի Պետերբուրգ մայրաքա-  
 ղաքի՝ յամի 1783 : — Վազարչապատ և Էլ-

միածին, — աւելորդ է յիշեցընելն՝ որ այն  
 ատեն ռուսաց իշխանութեան չէին պատկանիր :

Այս նոր հիմնարկութեան ալ հետամուտ  
 փափաքող, օտար և բարեգործ բարերար,  
 Զուղայեցի ազգային մ'է՛, հարուստ նիւթա-  
 կան ընչիւք, բայց աւելի սրտիւն և սիրով  
 առ բարին և օգուտ ազգին. բարոյ յիշա-  
 տակի արժանաւոր այս անձը՝ կը կոչուի Խօ-  
 շամալի որդի Խալդարեանց Գրիգոր :

Իր սպարանէն հրատարակուած Ժամագրոց  
 ինքնագիր յիշատակարանին մէջ (ի 1783)  
 կը պատմուի անոր հաստատութիւնը. « Ես,  
 կ'ըսէ նա, շատ ժամանակ է ի վեր փափաք  
 և ցանկութիւն ունէի տպարան մը ունենա-  
 լու, որպէս զի կարող ըլլամ ազգիս համար  
 կարևոր գրքեր հրատարակելու : Փափաքիս  
 կատարուեց այս կերպով յաջողեց ինձ Աս-  
 տուած : Հարկաւոր գործառնութեան մը հա-  
 մար պէտք եղաւ ինձ Հնդկաստանէն փոխա-  
 գրուել յԱնգլիա և ի քաղաքն Լոնդոն, ուր  
 գրեթէ տասը տարի մնացի : Այս երկուսի մի-  
 յոցին՝ ետէէ էի արուեստաւոր մը քանելու,  
 որ փորագրէր և տայր ինձ հայկական տա-  
 ւեթ. և թէպէտ գտայ շատերը, բայց ոչ որ  
 ի նոցանէ յանձնառու կ'ըլլար շինել ու տալ  
 պողպատեայ տաւերը, և ոչ անոնց մայրե-  
 ըրը, այլ միայն կապարեայ տաւեր : Իսկ  
 իմ ուզածս առաջիններն էին, որով և փա-  
 փաքս ալ անկատար կը մնար : Բայց լցու-  
 ցիչն ամենայն կարօտութեանց Աստուած,  
 իմ բազմամեայ իղնա կատարեց, յկարծած  
 ատենս զրկելով առ իս անգլիացի արուես-  
 տաւոր մը, որ իմանալով ուզածս՝ յանձն  
 առաւ շինել ինչ որ կ'ուզէի և տալ ինձ :  
 Ես ալ պատուիրեցի որ երեք սեսակ գիր  
 շինէ ինձի համար, և ինչ վարձք և փոխա-  
 րէն ուզեց՝ առանց ինչայելու խոստացայ :

« Գործոյն աւարտելէն ետքը, հարկ եղաւ  
 ինձ միտանգամ դանալ ի մայրաքաղաքն  
 Ռուսաց ի Պետերբուրգ, ուր քիչ ատենէն  
 արժանի եղայ ճաննալ զիշխանագն արքե-  
 պիսկոպոսն Յովսէփ, Ռուսաստանի Հայոց  
 առաջնորդը : Տեսնելով մեր նորակազմ տը-  
 պագիր տառքը, շատ զոհ և ուրախ եղաւ, և  
 պատուիրեց այրութենից փոքրիկ տեսրակ մը  
 տպագրել կամ Այբբենարան մը, զոր ըրի

իմ ծախքովս, և խոստացաւ այլևայլ գրքեր ալ գտնել տպագրութեամբ հրատարակելու համար :

« Այն ատեն գրեցի Լնդոնի արուեստաւորիս, որ գայ ի Պետերբուրգ խոշորագոյն տաւեր փորագրէ, ինչ որ ճշդիւ կատարեց նա, քայց թէ այս ամէն բանի համար որչափ և որպիսի ծախք և աշխատանք ունեցանք, փորձը ընտղներուն յայտնի է: Յետոյ՝ սըրբազանին կրկին հրամանաւր՝ իմ ծախքովս տպագրել տուի ժամագիրք կոչուած հասարակաց ազօթից այս գիրքը, որ աւարտեցաւ յամի 1784 » :

Յետագայ և յաջորդ 1785 տարւոյն, Շնորհալույ Յիսուս Ռրդի զրոց տասներորդ տըպագրութիւնն հրատարակուած է նոյն տպարանէն, Սանահնեցի յիշեալ Արղութեանց արհիեպիսկոպոսին հրամանաւր : Նոյնպէս ի նմին ամի՝ Սուրբ Գրոց համառօտ պատմութիւն մը « Թարգմանեալ ի ռուսաց լեզուէ, ի հայ բարբառ՝ ի պարսն Յարութիւն Դաւթեան Ջուղայեցոյ », և ի յէջն 65 կըստի. « Առ ի լնդոյ զպարսպ տեղիս, եզար բան ինչ յազագս իրուանց, թարգմանեալ ի յանգրիացոց լեզուէ, ի հայ բարբառ, ի պարսն Գրիգորէն թալգարեանց կոչեցելոյ » :

1786ին երեք գրքի հրատարակութեան կը հանդիպինք ի նմին տպագրատան, և են՝ Աւտուստաղերս, Աւետարան ձառու և վեհ գայրակողարեան, ինչպէս ի յաջորդ տարին կարճ ժամագրոց :

\* \*

Թալգարեանց որչափ ալ մեծաշան եռանդեամբ աշխատեցաւ իր անուամբն կառուցուած տպարանին վրայ, բայց չի կրնալով ըրած ծախքերն հասուցանել, ծանր պարտքի տակ ընկաւ, և միւրց և հնարք մը չէր կրնար գտնել անկէ ազատելու : Բարեբաղդաբար, ինչպէս տեսանք, իրեն խրախուսիչ և օգնական ունէր զՅովսէփ արքեպիսկոպոս, որ՝ թէ հոգևոր իշխանութեամբն և թէ պետական պաշտպանութեամբ՝ մեծ ազդեցութիւն ունեցող անձն համարուած էր : Ինք ալ փափաք ունէր, ուրիշ այլևայլ յառաջադիմական նա-

րութեանց հետ՝ տպարան մ'ալ հաստատել իւր թեմին մէջ, ի Նոր Նախիջևան : Տեսնելով թալգարեանց Գրիգորի գտնուած դժուարին զիրքը, իր վրայ առաւ իւր բոլոր պարտքերը, անով տպարանին ատէն եղաւ, և պատուիրեց Գրիգորի փոխարեւ զայն ի Նոր Նախիջևան : Այս ամէն բան մանրամասն աւանդուած են Շնորհալույ ընդհանրական թղթոյն յիշատակարանին մէջ, որ վերջին տպագիրն եղաւ թալգարեանի ի Պետերբուրգ, թէպէտ և Արղութեանց արքեպիսկոպոսին աւանուամբր : Թալգարեանցի ամէն արգիւնքն և պարտուց տակ մնալը նշանակելէն ետքը, կը յաւելու յիշատակագիրն. « . . . Տեսեալ անձնապիւր հովուին (Յովսէփայ Արղութեանց) ըզմնալն անօժանդակ նորակառոյց տպարանին, ի յԱլզարեան կամ ի Նոր Նախիջևան անգրափոխեցման զգիր գրեալ հրաւիրէր. և մինչ պարսն Գրիգորն թալգարեան ի հանապարհորդել նախապատրաստիւր, հասեալ օր մահուն մեռանէր : Իսկ ծանուցութիւն բոլորի տըպարանին հանդերձ պարտիւքն մնաց ի վերայ արքեպիսկոպոսին Յովսէփայ . . . որ և առաքեաց պիտակէտս վարդապետն Կոստան, զնուպօղտեցի ի Սանկապետրուրդի, յանձնելով նմա զամենայն կառավարութիւն տպարանին . . . իսկ նորա գնացեալ՝ իմացաւ զամենայն հանգամանս տպարանին. զի էր ի ներքոյ պարտուց հազար երկու հարիւր թումանի (որ է քառասուն քսակ). զոր Յովսէփ արքեպիսկոպոսն յանձն էառ հատուցանել օժանդակութեամբ ազգիս, և տանել զտպարանն ի Նոր Նախիջևան, որպէս և եղև իսկ : Ձի գնացեալ Յովսէփայ յԱլզարեան՝ եզրիս բազում նպաստամատոյցս գործոյն . . . որք ամենեքին առաաօրէն օգնեցին ըստ կարի իւրեանց, որով կարողեցաւ զտպարանի գարդն երևացուցանել, և բերել ի Նոր Նախիջևան հաստատել » . . . :

\* \*

Արղութեանց 1790ին տպագրեց յիւրում տպարանի ի Նոր Նախիջևան՝ Ստեփանոսի Սիւնեցոյ « Ողբք և հառաչանք ի դիմաց մօր մերոյ սրբոյ Արթուրյն Էլմիստճի » :

գրուածը. և ի յիշատակարանին կը յաւելու յետագայ ծանօթութիւններն իր սոհմին վրայ. « Հանդիպողքը բանիս, յիշեցէք ի Աստուած զՍանահնեցի զՅովսէփ արքեպիսկոպոսն ի կողմանս հիւսիսոյ, և զնախնիսն իմ զՋաբարիա Ամիր սպասապարն Հայոց և Վրաց. և զհանգուցեալ զձեռոցն իմ զՇիռշբէզն զսպանեալն յաճօրինաց ի տարապարտուց, և ըզպարկելտագնաց մայրն իմ զԳէլթէվանն, և զվաղաթառամ զեղբարսն իմ զՄովսէս՝ բէզն և զՓարսադանն, և զբոյրն իմ զՄարիամն, և զկենդանի եղբայրն իմ զԻշխանս պարոն իջժանբէզն, և զեղբորորդին իմ զԻշխանագուն զՇիռշն . . . որք ի հում կոչէաք Երկայնաբազուկը, և այժմ Արղութեանը . . . (Յովսէփ արքեպիսկոպոս) . . . զանտանելի պարտս տպարանին յուսով բարեսիրացող ստանձնեալ ի Սանկա-Պետրբուրգ մայրաքաղաքէն զտպարանն ի Նոր Նախիջևան փոխաբերեալ՝ զհաստատութիւն ետ ի նորակառոյց սուրբ Խաչ երկնահանգէտ »:

Նոյն տարին տպագրուած են հոն Գուսնաբան ուխտակաւուսներու կոչուած գիրք մը, և առաջին կանոն Սաղմուսաց կամ հեզարէն մը :

1794 Ժամագիրք և Սաղմուսարան, երկուքն ալ « արգեամբք և ծախիւք ի Սուրբաթ բնակեալ Արղարեանն բարեպաշտ պարոն Ստեփաննուին և կենակցի նորին մեծահաւատ Հովսէփիմ արկնուջն »:

Հետեւեալ տարին՝ Գուսն ողորմութեան կոչուած տեսարակ մը, յարում « հրովարտակն գրութեան ամենաբարեպաշտ և մեծ կայսերունի ինքնակալ թագուհոյն Եկատարինէի երկրորդի, սակս Գրիգորուպոլ նոր քաղաքին՝ Հայոց. ձեռամբ բարձր սրբազնութեան տեսան Յովսէփայ աստուածաբեալ արքեպիսկոպոսին, օժամմբ հիմնարկման » Երկրորդ, հիասքանչ հանդէսն հիմնարկութեան նոյն Գրիգորուպոլ քաղաքին Հայոց »: Նոյնպէս ի նմին ամի Ծործորեցոյն Վիպասանաբան զերկնայիս մարմնոց. 1794 ին Տետրակ համառոտ բառարանի, 1796 ֆրանսիսարեանի իժշկարանն և թեւաւար. 1796 ի իր մէկ Առեկարանաբանն, և յաջորդ տարոյն Վարդանայ Բարձրբարցոյցոյ Սաղ-

մասաց մեկնութեան գիրք, և որ վերջին հրատարակութիւն է Նոր Նախիջևանի Արղութեան տպարանի, « արգեամբ և ծախիւք ի Սուրբաթ բնակեալ՝ խօջայ Միսանեցի Գրիգոր աղայի որդի՝ ի Քրիստոս հանգուցեալ աղայ Յովանեսին Չուրպեցոյ »: Ի յիշատակարանին կը ծանուցուի թէ սատարք այս գրոց հրատարակման՝ զանազոր եղած են, որ տպագրութեանց դրամագուրին « որպէս ըզվինակ վանատուց՝ մնացէ միշտ նոր տպարանին՝ անվերջանալի, և որքան ինչ ազգօգուտ գրեանք սպիցին ի նոյն տպարանի՝ այն դրամով, ի զանազան ժամանակս, ա՛մենայնն՝ ի յիշատակ անուան իւրոյ և իւրայոցն լինիցի »:

Արղութեանց՝ ինչպէս ծանօթ է, ընտրեցու յաթոս հայրապետութեան Էջմիածնի. և մինչ ի Նոր Նախիջևանէ երթալը բազմել յայն, անակնկալ մահուամբ մեռաւ ի Տրփղիս :

Ուսումնասուր և ազգին մէջ գիտութիւն և ուսումն ծաւալելու համար մեծ ջանք ունէր իր մէկ թղթէն, գրեալ առ իւր բարեկամ և բարերար ի Հնդկս, 1790ն գրուած, « հետեւեալ սողերը մէջ կը բերենք, որ յայտնի կը ցուցնեն թէ որպիսի՛ սեր և եռանդ կար այլ սրտին մէջ, խալպարենցի տպարանին վրայ խօսելով, « . . . կամաւ, կ'ըսէ » զանձն իմ ետու. . . » առնուլ զտպարանն և բերել հաստատել ի Նոր Նախիջևան քաղաքի Հայոց . . . որպէս և արարի իսկ. Թերես ըստ շափու սկարութեան իմոյ կարացից զլուսաւոր գրեանս սրբոց հարցն մերոց և վարդապետութեանց՝ տպամբ ի լոյս ածել . . . որպէս զցանկալի գիրքն սրբոյն Ներսիսի Շնորհալոյն, զոր ի լոյս ածաք և առ ձեզ տաւքեցաք »:

« Բայց տպարանն որովհետեւ թարց իմաստութեան ոչ կարէ ինքնին կառավարիլ, որպէս երեսք առանց աչաց, և անձն թարց գլխոյ, վասն որոյ և հնարեցի դպրոց ինչ. զոր ըստ ժամանակիս բերմանցն և ըստ շափու կարողութեան իմոյ հաստատեցի . . . » Հրօմայեցի յայն, առաջին շինուած մեր, որ ի Նախիջևանն՝ յունայնացուցանել և սկսանել զմեծամեծ շինուածս կառուցանել վասն տըս

պարանին, և վասն պարոցին ի գանազան դասս բաժանելոյ՝ յաղագս մուծանելոյ ի նոսա ըզտեսակ տեսակ լեզուս և զգիտութիւնս . եթէ Տեառն ողորմութեամբ ողջ եղև զքանի մի ամս, . . . Գրեցի զի զամենայն կամս և ըզգիտաորութիւնս իմ պարզապէս գիտացէք . և ըստ այսմ պատրաստեցիք զձեզ օգնական լինել տկարութեան իմոյ . . . ի Մալղաս քաղաքօջն ինդրեցի ի պայծառ իշխան Շաւիրամ աղայ հաւատարիմ բարեկամէն իմմէ, յանձն առնուլ զգործս զայս (Իրեն փոխանորդն ըլլալու) ի պատիւ ազգին, զոր յոյժ սիրէ . . . ի Սուրբ կարգեցի զազնիւ աղա Մկրտիչ—Մէլիքնազար Խօծա Մինասենց՝ լինել հոգացող այսպիսեաց : Նոյնպէս և տէր Ստեփան անուամբ քահանայն մեր՝ ուր զնացեալ իցէ, յատկացուցեալ զոր՝ ինձ զնոյնելի է, և հարկաւոր իսկ : Ի Պասրա կարգեալ եմ թեթիւհանէ մեան պարոն Յովհաննէսն, ի Չուզա պարոն կարապետն Գալստեան, և ի Ստամպոլ՝ Չուզայեցի մահտեսի Գալստեանն թօմայեան : Էջ. վասն որոյ հարկաւորիմ ծանուցանել ձեզ որ զնոսա ճանաչէք, մեզ հարազատք և գործարանոյս հոգաբարձուք, և զպատահեալ բանս նորօք մեզ յառաջարկէք, և գրեանն ձեր նորօք մեզ հառուցանէք, որպէս և մեք առնեմք : Որովհետև Սաղմոս՝ շատ գակաւ օտանիւր, և յամենայն ուստեքէ

ինդրէին, հրամայեցի այժմ . . . Սաղմոսն որ ի յիշատակ Հնդկաց ժողովրդեան սպեցուցանել՝ իբրու գնախախայծ պտուղ ողորմութեան ձերոյ ի նորահասաստ սպարանէս . զկնի ևս նոյնպէս յաջորդեն մի զկնի միւսոյն : Գրեցի ի բազում ուրեք՝ գտանել վասն մեր զգրչեայ գրեանս նախնեացն մերոց և զպատմութիւնս . ոչ ուստեք գտի զօգնութիւն, բայց ի Չուզայո՝ որ վշտակիր եղբայրն իմ Յակոբ աստուածաբան վարդապետն և պարոն կարապետն Գալստեան՝ քանի մի գրեանս առաքեալ էին, զքանի մի ևս ունին ի պատրաստի . . . սակայն վասն ճանապարհացն փոխման և բռնաւորացն բռնութեան՝ ոչ կարողանան առաքել : Ունիմք և բազում թարգմանութիւն ի Ռուստաց լեզուէ ի մեր բարբառ . ի Չուզայեցի հեզահոգի պարոն Յարութիւն Գաւիթ թիլմեցէն՝ խրատ վարժարանի մանկանց . և զանազան կացութիւն և ամբողջ պատմութիւն Աղեկանդր Մակեդոնացոյ . զոր ամենայն պիտոյ է մեզ մի զկնի միոյ աւպեցուցանել . այլ այժմ յառաջիկայ՝ յետ Սաղմոսին զՀայեի Աստուածաշունչն սպեցուցանել : Դուք ևս՝ ով ոք ինչ կամիք, տը պարանն մեր և եօ՝ միտ պատրաստ ի նմին կատարել յօժարութիւն ձեր » :

Շարայարեչի

